

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 203-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցողիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների (այսուհետ՝ աշխատանքներ) իրականացման կարգը:

2. Պետական անտառային հողերում աշխատանքներ իրականացնելու նպատակով իրավաբանական և ֆիզիկական անձինք (այսուհետ՝ դիմումատու) դիմում են ներկայացնում լիազորված պետական մարմին:

3. Դիմումատուն դիմումին կից պետք է ներկայացնի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ, լիազորված պետական մարմնի հետ նախապես համաձայնեցված առաջադրանքի հիման վրա մշակված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով դրական եզրակացություն (եզրակացություններ) ստացած նախագծի պատճենը (այսուհետ՝ փաստաթղթերի փաթեթ):

4. Լիազորված պետական մարմինը դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթն ստանալուց հետո, անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) հիման վրա, տասն աշխատանքային օրվա ընթացքում անտառային տնտեսություն վարող կազմակերպության հետ համատեղ քննարկում և դիմումատուին գրավոր տեղեկացնում է՝

1) աշխատանքների իրականացման համաձայնություն տրամադրելու մասին.

2) աշխատանքների իրականացումը մերժելու մասին:

5. Դիմումը և փաստաթղթերի փաթեթը երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են դիմումատուին, եթե՝

1) փաստաթղթերի փաթեթն ամբողջական չէ.

2) առկա են աշխատանքների իրականացման վայրին վերաբերող անհամապատասխանություններ:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված դեպքերում դիմումատուն նշված թերությունները 10-օրյա ժամկետում վերացնելով կարող է կրկին դիմել լիազորված պետական մարմին՝ ներկայացնելով նոր դիմում և համալրված փաստաթղթերի փաթեթը:

7. Աշխատանքների իրականացումը մերժվում է, եթե՝

1) դիմումում նշված աշխատանքների իրականացումը հակասում է անտառաշինական նախագծերով (անտառակառավարման պլաններով) նախատեսված միջոցառումներին.

2) դիմումատունն սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետներում փաստաթղթերի փաթեթը չի ներկայացնում:

8. Աշխատանքների իրականացման վերաբերյալ լիազորված պետական մարմնի կողմից տրված դրական եզրակացության համաձայն անտառային տնտեսություն վարող կազմակերպության և դիմումատուի միջև տասն աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է անտառային հողերի օգտագործման պայմանագիր՝ նախատեսելով այդ աշխատանքների իրականացման հետևանքով անտառային տնտեսությանը հասցված վնասի հատուցման վերաբերյալ դրույթներ:

9. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված պայմանագիրը կնքելուց հետո դիմումատունն երեք ամսվա ընթացքում լիազորված պետական մարմնի համաձայնեցմանն է ներկայացնում անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր (այսուհետ՝ ծրագիր), որը ներառում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը:

10. Ծրագիրն իրականացվում է դիմումատուի ֆինանսական միջոցների հաշվին: Ծրագրի իրականացման ավարտ է համարվում անտառապատման ընթացքում հիմնադրված անտառտնկարկները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անտառի շարք փոխադրելու օրը: Ծրագրով նախատեսված աշխատանքները պատշաճ չիրականացնելը, ինչպես նաև պայմանագրի պահանջներն ու պայմանները չպահպանելը հիմք են հանդիսանում անտառօգտագործողից պահանջելու դադարեցնել աշխատանքները, հատուցել և վերականգնել անտառօգտագործման հետևանքով անտառներին և անտառային հողերին պատճառված վնասը: Սույն կետի դրույթները պարտադիր ներառվում են պայմանագրում:

11. Աշխատանքների ավարտից հետո անտառային հողերի ռեկուլտիվացիան իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 566 որոշման դրույթներին համապատասխան:

12. Սույն կարգի 8-րդ կետի համաձայն անտառային հողերի օգտագործման մասին կնքվող պայմանագրի ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, բայց ոչ ավելի, քան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ